

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում.
Կազմակերպության ստանդարտներ
Մշակման և ձևավորման ընդհանուր պահանջներ



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ 2019

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Ստանդարտացում» աշխատանքային խմբի կողմից:

3 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի տնօրենի 2019 թվականի նոյեմբերի 25-ի N 138-Լ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N 1472-2019

5 Սույն ստանդարտում իրացված են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները

6 ՀԱՍ 1.4-2001 ՓՈԽԱՐԵՆ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության
II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ Մշակման և ձևավորման ընդհանուր պահանջները

Стандартизация в Республике Армения
СТАНДАРТЫ ОРГАНИЗАЦИЙ

Общие требования к разработке и оформлению
National system for standardization
STANDARDS OF ORGANIZATIONS.

General requirements for development and lay out

Գործարկման թվականը՝ 01.01.2020թ.

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են կազմակերպության ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակման, հաստատման, համաձայնեցման (անհրաժեշտության դեպքում), հաշվառման, չեղյալ հայտարարման և կիրառման ընդհանուր պահանջները:

Կազմակերպության ստանդարտների տեսակ են հանդիսանում նաև տեխնիկական պայմանները*:

Կազմակերպության ստանդարտներով (տեխնիկական պայմաններով) սահմանված դրույթները ենթակա են կիրառման իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, գիտատեխնիկական, ճարտարագիտական, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից, որոնք մշակել և հաստատել են դրանք:

- Արտահանվող արտադրանքի համար հիմնականում մշակում են տեխնիկական պայմանները:

ՀԱՏ 1.4-2019

Սույն ստանդարտով սահմանված դրույթները նախատեսված են կիրառման պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտահետազոտական ինստիտուտների, արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների (միությունների), ձեռնարկատերերի ու սպառողների միավորումների, առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների & անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների կողմից՝ ըստ ամրագրված գործունեության բնագավառի կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) փորձաքննության ժամանակ:

2 Նորմատիվ վկայակոչումներ

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀԱՏ 1.0-2013 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Հիմնական դրույթներ

ՀԱՏ 1.1-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Տերմիններ և սահմանումներ

ՀԱՏ 1.5-2013 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ստանդարտների կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը, բովանդակությանը և նշագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

ՀԱՏ 2.114-2014 Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Տեխնիկական պայմաններ

ՀԴ 001-2000 Ստանդարտների դասակարգիչ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը՝ ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված ստանդարտների ՀԱՏ 1.5-2013 համապատասխան կատալոգների և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

3 Տերմինները և սահմանումները

Սույն ստանդարտում կիրառվում են տերմիններ՝ ըստ ՀԱՏ 1.1:

4 Ընդհանուր դրույթները

4.1 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում, ընդունում, դրանցում փոփոխություններ կատարում, չեղյալ հայտարարում և հաշվառում են իրավաբանական անձինք և (կամ) անհատ ձեռնարկատերերը՝ ըստ ՀԱՏ 1.0 ստանդարտի:

4.2 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում են արտադրանքի (ծառայությունների) տեխնիկական պահանջների և նորմերի սահմանման, ինչպես նաև արտադրության կազմակերպման և կատարելագործման նպատակով:

4.3 Կազմակերպության ստանդարտներով (տեխնիկական պայմաններով) սահմանված պահանջները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

4.4 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում են տվյալ կազմակերպությունում ստեղծվող և կիրառվող արտադրանքի, գործընթացների և ծառայությունների, ինչպես նաև տվյալ կազմակերպությունում ստեղծվող և Հայաստանի Հանրապետության ու Եվրասիական տնտեսական միության պետությունների, այդ թվում՝ Մաքսային միության պետությունների շուկա մատակարարվող արտադրանքի, ինչպես նաև պայմանագրերին համապատասխան կազմակերպությունից դուրս կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների համար:

4.5 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում են արտադրանքը մշակողի (պատրաստողի), գործընթացները կատարողի կամ ծառայությունները մատուցողի որոշմամբ կամ պատվիրատուի (սպառողի) պահանջով:

4.6 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում են.

կազմակերպությունում ազգային ստանդարտների, այդ թվում միջպետական, միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ստանդարտների կիրառումն ապահովելու համար,

տվյալ տեսակի արտադրանքին, գործընթացներին և ծառայություններին վերաբերող ազգային ստանդարտների բացակայության կամ դրանցով սահմանված պահանջների կոնկրետացման անհրաժեշտության դեպքում,

տվյալ տեսակի արտադրանքին, գործընթացներին և ծառայություններին վերաբերող գործող ստանդարտների պահանջների լրացման և (կամ) խստացման անհրաժեշտության դեպքում:

4.7 Կազմակերպության ստանդարտներ (տեխնիկական պայմաններ) մշակում են նաև գիտական կամ այլ հետազոտությունների արդյունքում ստացված արտադրանքի, գործընթացների, ծառայությունների, փորձարկման մեթոդների, այդ թվում ոչ ավանդական տեխնոլոգիաների և գործունեության այլ տեսակների համար:

4.8 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) մշակում են.

մեկ որոշակի արտադրատեսակի, հումքի, նյութի, մեկ գործընթացի և ծառայության մեկ տեսակի և այլի համար,

որոշակի արտադրատեսակների, նյութերի, հումքերի, գործընթացների և ծառայությունների խմբի համար (խմբային կազմակերպության ստանդարտ կամ խմբային տեխնիկական պայմաններ),

արտադրանքի բաղկացուցիչ մասերի, տեխնոլոգիական հանդերձանքի և գործիքների համար,

տեխնոլոգիական գործընթացների համար՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի, մարդու կյանքի, առողջության պահպանման, անվտանգության և գույքի պահպանման և անվտանգության պահանջների ապահովումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Եթե անհրաժեշտ է մշակել այնպիսի արտադրատեսակներ, նյութեր և այլն, որոնց պետք է ներկայացվեն ավելի խստացված պահանջներ, քան գործող կազմակերպության ստանդարտներով (տեխնիկական պայմաններով) սահմանվածները, ապա մշակվում է առանձին կազմակերպության ստանդարտ (տեխնիկական պայմաններ) կամ գործող կազմակերպության ստանդարտը (տեխնիկական պայմանները) վերափոխում են խմբայինի՝ դրանցում լրացումներ (փոփոխություններ) կատարելով:

4.9 Կազմակերպության խմբային ստանդարտները (տեխնիկական պայմանները) կազմում են երկու և ավելի այնպիսի արտադրատեսակների համար, որոնք ունեն ընդհանուր կառուցվածքային և (կամ) զգայորոշման ու ֆիզիկաքիմիական հատկանիշներ, միասնական կառուցվածք՝ լինելով տարբեր պարամետրների և (կամ) չափերի, ունենալով առանձին բաղադրամասերի որոշակի կառուցվածքային տարբերություններ, ինչպես նաև միանման բաղկացուցիչ մասերի և արտադրատեսակների տարբեր դասավորություններ և տարբեր քանակներ:

4.10 Թույլատրվում է չմշակել կազմակերպության ստանդարտներ (տեխնիկական պայմաններ), եթե արտադրանքը (ծառայությունը) կարող է թողարկվել ըստ որոշակի տեսակի արտադրանքի ստանդարտի, ինչպես նաև պատվիրատուի (հիմնական սպառողի) համաձայնությամբ ըստ՝

- տեխնիկական առաջադրանքի (պայմանագրի, արձանագրության, կոնստրուկտորական փաստաթղթերի և այլն)՝ եզակի արտադրանքի համար,

- կոնստրուկտորական փաստաթղթերի, որոնք կազմում են արտադրատեսակի տեխնիկական փաստաթղթերի լրակազմի մի մասը, այդ արտադրատեսակի բաղկացուցիչ մասերի համար,

- տեխնիկական փաստաթղթերի (տեխնոլոգիական և կոնստրուկտորական փաստաթղթերի)՝ հումքերի, նյութերի և կիսաֆաբրիկատների համար, որոնք ենթակա են հետագա մշակման և արտադրվում են սահմանված ծավալով մեկ կազմակերպության ուղղակի պատվերով,

- չափանմուշ-օրինակի և դրա տեխնիկական նկարագրության՝ ժողովրդական սպառման ոչ պարենային ապրանքների համար (բացառությամբ բարդ կենցաղային տեխնիկայի, կենցաղային քիմիայի արտադրանքի և փոխադրամիջոցների), երբ դրանց որակի ցուցանիշները սահմանված են համասեռ արտադրանքի խմբի ստանդարտով:

4.11 Կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) մշակման մասին որոշում ընդունելու համար կարող են հիմք ծառայել.

- արտադրանքի մշակման տեխնիկական առաջադրանքը (պայմանագիրը, արձանագրությունը և այլն)՝ մշակված և հաստատված արտադրանքը մշակող կազմակերպության և պատվիրատուի (հիմնական սպառողի) կողմից,

- արտադրանքը մշակող կամ այն արտադրող կազմակերպությունների նախաձեռնողական առաջարկությունները:

4.12 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) հաստատումից առաջ՝ հաստատողի (մշակողի) որոշմամբ կարող է ենթարկվել փորձաքննության, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության, ԵԱՏՄ և Մաքսային միության տարացքում գործող տեխնիկական կանոնակարգերի, ազգային, միջպետական և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանության, ինչպես նաև չափագիտական, իրավական, արտոնագրային և այլն:

Փորձաքննությունը կարող է իրականացվել կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) նախագիծը մշակող կազմակերպության համապատասխան մասնագետների (նրանց առկայության դեպքում) կողմից:

Անհրաժեշտության դեպքում կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) նախագիծը փորձաքննության համար կարող է ուղարկվել համապատասխան մասնագիտացված կազմակերպություն:

4.13 Արտադրանքի կոնստրուկտորական կամ այլ տեխնիկական փաստաթղթերի լրակազմի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պայմանների մշակման կարգը՝ ըստ ՀՍ 2.114 ստանդարտի:

5 Կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) կառուցմանը, շարադրմանը և ձևավորմանը ներկայացվող պահանջներ

5.1 Արտադրանքի կոնստրուկտորական կամ այլ տեխնիկական փաստաթղթերի լրակազմի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պայմանների կառուցման, շարադրման և ձևավորման կանոնները՝ ըստ ՀՍ 2.114 սահմանված պահանջների:

5.2 Կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) կառուցման, շարադրման և ձևավորման (բացառությամբ տիտղոսաթերթի) կանոնները՝ ըստ ՀՍ 1.5 սահմանված պահանջների:

5.3 Կազմակերպության ստանդարտները (տեխնիկական պայմանները) բաղկացած են հետևյալ կառուցվածքային տարրերից.

ՀԱՏ 1.4-2019

տիտղոսաթերթից,

հիմնական մասից,

պարտադիր և (կամ) տեղեկատու հավելվածներից (անհրաժեշտության դեպքում):

5.4 Կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) տիտղոսաթերթին ներկայացվող պահանջները

5.4.1 Կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) համար ձևավորվում է տիտղոսաթերթ, որը նախատեսված է տվյալ փաստաթղթի մասին, ինչպես նաև այն արտադրանքի, գործընթացի և ծառայության մասին ընդհանուր տվյալների ներկայացման համար, որի վրա տարածվում է կազմակերպության ստանդարտը կամ տեխնիկական պայմանները:

5.4.2 Կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) տիտղոսաթերթը ձևավորում են՝ ըստ Ա հավելվածի:

Կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) տիտղոսաթերթի վրա պետք է նշված լինեն.

կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) լրիվ անվանումը և դրա սեփականության ձևը (օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, փակ բաժնետիրական ընկերություն, անհատ ձեռնարկատեր և այլն), (նկար Ա.1, դաշտ 1,),

դասակարգման խմբի կոդը՝ ըստ ՀԴ 001 ստանդարտների դասակարգչի, իսկ դրա տակը՝ արտադրանքի կոդը՝ ըստ արտադրանքի դասակարգչի [1] (նկար Ա.1, դաշտ 2),

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) հաստատման վերաբերյալ՝ «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» մակագրության տակ նշելով կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) լրիվ անվանումը և դրա սեփականության ձևը, հաստատողի պաշտոնը, ստորագրությունը, անվան սկզբնատառը և ազգանունը, հաստատման թվականը, (նկար Ա.1, դաշտ 3):

Կազմակերպության ստանդարտը (տեխնիկական պայմանները) որպես կանոն, հաստատում են առանց ժամկետի սահմանափակման, սակայն այդ ժամկետը՝ կազմակերպության ստանդարտը (տեխնիկական պայմանները) հաստատողի որոշմամբ, կարող է լինել սահմանափակ՝ կախված արտադրանքի, գործընթացի և ծառայության բնույթից, պայմանագրի ժամկետից, արտադրության ժամկետից, ինչպես նաև եզակի արտադրանքի համար:

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) համաձայնեցման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում)՝ «ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է» մակագրության տակ նշելով պետական մարմնի, կազմակերպության՝ ում հետ համաձայնեցված է կազմակերպության ստանդարտը (տեխնիկական պայմանները), լրիվ անվանումը, համաձայնեցումը վավերացող անձի պաշտոնը, ստորագրությունը, անվան սկզբնատառը և ազգանունը, թվականը (նկար Ա.1, դաշտ 4):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայնեցումը կարող կատարվել համապատասխան նամակի ձևով:

արտադրանքի (ծառայության) անվանումը (նկար Ա.1, դաշտ 5),

փաստաթղթի անվանումը՝ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ» կամ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ» (նկար Ա.1, դաշտ 6),

փաստաթղթի նշագիրը, որը կազմված է դասիչից՝ կազմակերպության ստանդարտի համար՝ «ԿՍՏ», իսկ տեխնիկական պայմանների համար՝ «ՏՊ AM», այնուհետև՝ բացակից հետո, կազմակերպության ութանիշ ծածկագիրը՝ ըստ պետական միասնական գրանցամատյանի, որից հետո կետով առանձնացված՝ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) հաշվառման հերթական համարը, իսկ վերջում՝ գծիկից հետո՝ հաստատման տարեթիվը (նկար Ա.1, դաշտ 7),

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) առաջին անգամ գործարկման կամ այլ փաստաթղթին փոխարինելու մասին: Տվյալ տեղեկությունը ներկայացվում է հետևյալ ձևով՝ «Գործարկվում է առաջին անգամ» կամ «..... ՓՈԽԱՐԵՆ» բառերը (նկար Ա.1, դաշտ 8),

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) գործարկման մեջ դնելու ժամկետի մասին (նկար Ա.1, դաշտ 9),

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) փորձաքննության վերաբերյալ (դրա իրականացման դեպքում) (նկար Ա.1, դաշտ 10):


Փորձաքննության արդյունքների մասին տեղեկատվությունը կարող է տեղադրվել նկար Ա.1-ի դաշտ 10-ում՝ նշվել փորձաքննություն իրականացնող կազմակերպության անվանումը, փորձաքննության իրականացման թվականը, մատյանում հերթական համարը:

Փորձաքննության արդյունքները կարող են ներկայացվել նաև համապատասխան նամակով:

տեղեկություններ կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) բնօրինակը պահողի գտնվելու վայրի մասին (նկար Ա.1, դաշտ 11),

կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների) հաստատման թվականը (նկար Ա.1, դաշտ 12):

**Հավելված Ա
(տեղեկատու)
Կազմակերպության ստանդարտի (տեխնիկական պայմանների)
տիտղոսաթերթի ձևը**



Նկար Ա.1

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

[1] ԴԱՍԱԿԱՐԳԻՉ ՀԴ-012-2013, ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգիչ»-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 772-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 875-Ն հրամանով

Հանգուցային բառեր.

Կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ, մշակում, հաստատում, տիտղոսաթերթ

ՍԴ 01.120

Ստանդարտների ազգային
ինստիտուտ ՓԲԸ
տնօրենի առաջին տեղակալ

Մ. Բզնունի

Ստանդարտների ազգային
ինստիտուտ ՓԲԸ
Ստանդարտացման
բաժնի պետ, աշխատանքային խմբի ղեկավար

Թ. Բաբայան

Ստանդարտների ազգային
ինստիտուտ ՓԲԸ
Ստանդարտացման
բաժին

Ս. Խաչատրյան